ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2016, 69, № 2, 86-88

ՅՈՒՐԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ
(ծննդյան 75-ամյակին)

Լրացավ վաստակաշատ գիտնական, նորագույն հրաբխագիտության ոլորտի ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու ***Յուրա Գուրգենի Ղուկասյանի*** ծննդյան 75 և աշխատանքային գործունեության 52- ամյակը:

Յու.Ղուկասյանը ծնվել է 1940թ. օգոստոսի 8-ին Հայկական ԽՍՀ Աշտարակ քաղաքում, ծառայողի ընտանիքում: Բարձր առաջադիմությամբ ավարտել է Օշականի Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը, 1958թ. ընդունվել է Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և ավարտել այն 1963թ.՝ ստանալով ճարտարագետ-երկրաբանի որակավորում:

1963թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական Գիտությունների ինստիտուտում, որտեղ, որոշ ընդմիջումներով, մինչև օրս աշխատում է Հրաբխագիտության լաբորատորիայում՝ զբաղեցնելով ինժեների, կրտսեր գիտաշխատողի, ավագ գիտաշխատողի, գիտական թեմայի ղեկավարի պաշտոնները:

1968թ. Յու.Ղուկասյանը ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ԵԳ-ի ասպիրանտուրա, միևնույն ժամանակ՝ ընդհուպ մինչև 1972թ., աշխատելով Հայաստանի Երկրաբանական վարչությանում որպես երկրաբան՝ մասնակցելով ՀԽՍՀ հյուսիս-արևմտյան շրջաններում ոչ մետաղային օգտակար հանածոների հետախուզաորոնողական, քարտեզահանման և պաշարների հաշվարկման համալիր երկրաբանական աշխատանքներին: Նա բազմիցս գործուղվել է ԽՍՀՄ-ի առաջնակարգ գիտական կենտրոններ, մասնավորապես Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, մասնագիտական փորձի և կատարելագործման նկատառումներով:

Յու.Ղուկասյանը 1985թ. Թբիլիսիում, Վրաստանի ԳԱ Ա.Ի.Ջանելիձեի անվան Երկրաբանական ինստիտուտի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Արագածի հրաբխային համալիրի պետրոգրաֆիան, հանքաբանա-երկրաքիմիական առանձնահատկությունները և ձևավորման պատ-

մությունը» թեմայով՝ ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1985թ. Յու.Ղուկասյանը տեղափոխվում է աշխատանքի ՀԽՍՀ Ջրային տնտեսության նախարարության Մասիսի արշավախումբ հիդրոերկրաբանա-մելիորատիվ բաժնի պետի պաշտոնում: Ղեկավարում է Հայաստանի տարբեր շրջաններում տարվող հիդրոերկրաբանական համալիր աշխատանքները, ինչպես նաև համակարգում է առանձնահատուկ կարևորություն ներկայացնող Արարատյան դաշտավայրի արտեզյան ջրավազանի պաշարների հաշվարկման, հիդրոդինամիկ պայմանների և այլ խնդիրների լուծման գործընթացը:

1986թ. Յու.Ղուկասյանը հրավիրվում է աշխատանքի ԽՍՀՄ Ատոմային էներգետիկայի նախարարության ԱՏՈՄՏԵՊԼՈԷՆԵՐԳՈՆԱԽԱԳԻԾ ինստիտուտի Երևանյան НИИОССС АЭС բաժանմունք (1993թ. վերափոխվել է ՀՀ էներգետիկայի և Վառելիքի նախարարության «ԱտոմԷներգոՍեյսմոՆախագիծ» ինստիտուտ), որտեղ մինչև 1996թ. աշխատել է առաջատար գիտաշխատողի, բաժնի պետի, գլխավոր մասնագետի պաշտոններում: Այդ տարիներին Յու.Ղուկասյանի գիտահետազոտական և կիրառական բնույթի գործունեությունը նվիրված է եղել ատոմային էլեկտրակայանների և էներգետիկ այլ համակարգերի սեյսմիկ և այլ վտանգների գնահատման և սեյսմակայունության ապահովման ակտուալ խնդիրների լուծմանը: 1985-1997թ. նա հանդիսանում է «ԱտոմԷներգոՍեյսմոնախագիծ» ինստիտուտի Երևանյան մասնաճյուղի գիտա-տեխնիկական խորհրդի անդամ, ինչպես նաև «АтомЭнергопроект» գլխամասային ինստիտուտում փորձագիտական և խորհրդատվական ծառայություններ իրականացնող մշտական ներկայացուցիչ: Այդ տարիներին Յու.Ղուկասյանը բազմիցս մասնակցել է ԽՍՀՄ և ՌԴ կազմակերպված միութենական և միջազգային մի շարք գիտաժողովների, ներկայացնելով Երևանյան մասնաճյուղում կատարված ծրագրերի և նախագծերի իրագործման արդյունքները: Յու.Ղուկասյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ (որպես փորձագետի) կազմակերպվել և իրագործվել են համագործակցական («АтомЭнергопроект», ИФЗ АН РД, ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, ԳՖԻ, Երկրաբանական վարչություն, ԵՊՀ, ԱՊԱԾ և այլն) մի շարք գիտահետազոտական և կիրառական աշխատանքներ առնչվող հիմնականում ՀԱԷԿ-ի վերագործարկման խնդիրների հետ, ինչպես նաև նախագծային աշխատանքներ ԽՍՀՄ և ԱՊՀ տարածքներում:

1997թ. Յու.Ղուկասյանը վերադառնում է աշխատանքի ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, որտեղ ավագ գիտաշխատողի, թեմայի ղեկավարի պաշտոնում շարունակում է իր գիտական գործունեությունը: Նրա գիտական հետաքրքրություններն առնչվում են Հայաստանի տարածքի ռեգիոնալ երկրաբանությանը, նորագույն հրաբխականությանը, հրաբխային գոյացումների քարտեզագրմանը, դրանց պետրոգրաֆիական, երկրաքիմիական հետազոտություններին, ինչպես նաև երկրադինամիկական, երկրաէկոլոգիական (ՀԱԷԿ-ի

ռադիոակտիվ թափոնների ստորգետնյա անվտանգ և երկարաժամկետ մեկուսացման) խնդիրներին: 1997-2006թթ. ԱՄՆ Բերկլիի գիտական կենտրոնի հրավերով նա մասնակցել է երկրաբանական բարենպաստ միջավայրում ռադիոակտիվ թափոնների մեկուսացմանն առնչվող հետազոտություններին և փորձի փոխանակմանը, ինչպես նաև այդ թեմայով զեկուցումներով հանդես է եկել գիտաժողովներում:

Յու.Ղուկասյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 60 գիտական աշխատանքների, հրատարակված հանրապետական և միջազգային գիտական մամուլում, 5 կոլեկտիվ մենագրությունների, ինչպես նաև երկու տասնյակից ավելի ամփոփիչ ձեռագիր հաշվետվությունների: Շահել է չորս միջազգային (1997թ., 2000թ., 2001թ. և 2005թ.) և մեկ հանրապետական (2005թ.) անվանական դրամաշնորհներ, ինչպես նաև մասնակցել է բազմաթիվ կոլեկտիվ դրամաշնորհների (2008թ., 2009թ., 2013թ., 2015թ. և այլն):

Նա անդամակցել է մի շարք մասնագիտական ընկերությունների և հասարակական կազմակերպությունների: 1998թ. ներգրավված է որպես Հայաստանի «Ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման ՀՀ միջգերատեսչական կոնսուլտատիվ աշխատանքային խմբի», ԱՄՆ-ի «ANS COS COM»-ի գիտական ասոցիացիայի անդամ (2003թ.) 2015թ. ընդգրկվել է ԱՄՆ «American Association For Scienses and Technology» (AASCIT) մուլտիգիտական կազմակերպության մեջ որպես լիիրավ անդամ:

Յու.Ղուկասյանը իր երկարամյա և բեղմնավոր մասնագիտական գործունեության ընթացքում արժանացել է մի շարք պարգևատրումների և խրախուսանքների՝ ՀԽՍՀ ԳԱ Նախագահության «Շնորհակալակագիր» (1967), «Վաստակագիր» (2015), Ատոմտեպլոէներգա նախագիծ ինստիտուտի «Պատվոգիր» (1986) և այլն:

Ի սրտե շնորհավորելով Յու.Ղուկասյանին ծննդյան 75 ամյակի կապակցությամբ՝ մաղթում ենք նրան քաջառողջություն և բեղմնավոր աշխատանք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն